MENARINI-ի ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ethical vision, Integrity in action

MENARINI group

Ներածություն

Menarini-ն հանձնառու է բարեխղճորեն և բոլոր գործող օրենքների ու նորմերի համապատասխան իրականացնել ողջ ձեռնարկատիրական գործունեությունը: Մենք ողջունում ենք էթիկական վարվելակերպը և մեր գործունեությունն իրականացնում ենք ի շահ տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունության:

Մենք ակնկալում ենք, որ մեր բոլոր ***Երրորդ անձինք*** կկիսեն այն սկզբունքները, որոնք շարադրված են սույն Երրորդ անձանց վարքագծի համընդհանուր կանոնագրքում (այսուհետև՝ «GTP կանոնագիրք»): Menarini-ն նաև ակնկալում է, որ Երրորդ անձինք բարեխղճության և բիզնես վարքագծի նույն մակարդակը կպահանջեն իրենց անձնակազմից և իրենց կազմակերպությունից դուրս յուրաքանչյուրից, ովքեր ներգրավված են Menarini-ի համար կամ նրա հետ ապրանքներ և ծառայություններ մատուցելու գործունեության մեջ:

Բոլոր Երրորդ անձինք պետք է պայմանագրային և փաստացի հիմքով երաշխավորեն, որ իրենց ենթամատակարարները և ենթակապալառուները պահպանում են սույն GTP կանոնագիրքը:

Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը չի աշխատում Menarini-ում, և որի հետ ընկերությունը պայմանագրեր է կնքում բնականոն ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում, ինչպիսիք են առևտրականները, մատակարարները, դիստրիբյուտորները, խորհրդատուները և այլ բիզնես գործընկերները:

Երրորդ անձինք պետք է պահպանեն բոլոր գործող օրենքները և նորմերը և ձեռք բերեն ու պահպանեն անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպիսիք են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրվող թույլտվությունները, վկայականները և վավերացումները:

Սույն GTP կանոնագիրքը չի ներառում գործող նորմատիվ-իրավական հիմքերի սպառիչ ցանկը, որոնք պետք է պահպանեն Երրորդ անձինք, սակայն նախատեսված է Menarini Group-ի համար առավել կարևորություն ունեցող թեմաների վրա ուշադրություն հրավիրելու համար:

ԲԻԶՆԵՍ ԷԹԻԿԱ 4

Կաշառքի մերժում

Փոխգործողություն բուժաշխատողների կամ հիվանդների կազմակերպությունների հետ

Գովազդային գործունեություն և գիտական փոխանակումներ

Նվերներ և հյուրընկալություն

Շահերի բախում

Մրցակցություն և արդար գործընկերություն

Միջազգային առևտրային գործունեություն

Հաշվապահական գրքեր և գրառումներ

Գաղտնի տեղեկատվություն

Տվյալների պաշտպանություն

Մտավոր սեփականություն

Հակամարտող տարածաշրջանների հանքանյութեր

ԱՇԽԱՏԱՆՔ 7

Մարդու իրավունքներ

Աշխատանքային իրավունքներ/ Բացարձակ անհանդուրժողականություն ոտնձգությունների և խտրականության հանդեպ

Երեխաների աշխատանք, Հարկադիր աշխատանք և Մարդկանց թրաֆիքինգ

Աշխատաժամեր, աշխատավարձ և հավելումներ

Հավաքների ազատություն

ՈՐԱԿ 8

Փոփոխությունների վերահսկողություն

Որակի / առաքման արդյունավետություն

Որակի համակարգ / Որակի պահանջներ

Փաթեթավորում / Պիտակավորում

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ 9

Աշխատողների պաշտպանություն

Գործընթացների անվտանգություն

Շրջակա միջավայրի պահպանություն և թույլտվություններ

Քիմիական նյութեր, թափոններ և արտանետումներ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԻՐԱՁԵԿՈՒՄ) 10

Հաղորդում

Կարգապահական պատժամիջոցներ

ԲԻԶՆԵՍ ԷԹԻԿԱ

Կաշառքի մերժում

Menarini-ին խստորեն արգելում է կաշառքի ցանկացած ձև (լինի դա հանրային, մասնավոր, ակտիվ, թե պասիվ), յուրացումը, խարդախությունը, գողությունը և/կամ զիջումն անհարկի արտոնությունների նկատմամբ:
Ակնկալվում է, որ մեր Երրորդ անձինք չեն զբաղվի որևէ գործունեությամբ (այդ թվում՝ անօրինական վճարումներով), որը կարող է ենթադրել ներգրավվածություն կոռուպցիայի կամ կաշառակերության մեջ, հատկապես Menarini-ի համար կամ նրա հետ աշխատելու դեպքում:
Ավելին, Երրորդ անձինք չպետք է գումար կամ որևէ արժեքավոր բան տան, առաջարկեն, խոստանան, ընդունեն կամ հայցեն մասնավոր առևտրային կազմակերպության որևէ ներկայացուցչի կամ աշխատակցի՝ այդ կազմակերպությանը դրդելու համար օգնել Menarini-ին անօրինական կերպով գործարք կնքելու կամ պահպանելու կամ ցանկացած ապօրինի շահ ստանալու հարցում: Երրորդ անձանց ընտրության հարցում մենք ցուցաբերում ենք զգուշավորություն և պատշաճ ուշադրություն՝ հարաբերություններ պահպանելու համար միայն նրանց հետ, ովքեր հավատարիմ են մեր էթիկական չափանիշներին:

Փոխգործողություն բուժաշխատողների կամ հիվանդների կազմակերպությունների հետ

Մենք ակնկալում ենք, որ բուժաշխատողների, առողջապահական կազմակերպությունների կամ հիվանդների կազմակերպությունների հետ մեր անունից փոխգործակցելիս՝ Երրորդ անձինք կգործեն ազնվությամբ և գործող օրենքների, նորմերի, ուղեցույցների և ոլորտը կարգավորող կանոնագրքերի համապատասխան:

Գովազդային գործունեություն և գիտական փոխանակումներ

Երրորդ անձանցից ակնկալվում է, որ բոլոր մարքեթինգային և գովազդային նյութերն ու գործունեությունը կիրականացնեն բարձր էթիկական, բժշկական և գիտական չափանիշներին համաձայն և գործող օրենքների, նորմերի, ուղեցույցների և ոլորտը կարգավորող կանոնագրքերի համապատասխան:

Նվերներ և հյուրընկալություն

Երրորդ անձինք չպետք է ընդունեն կամ հանձնեն նվերներ, հյուրասիրություն կամ որևէ այլ տեսակի անձնական բարիք մեր Ընկերության կամ մեր անունից՝ առանց նախապես Menarini-ի հավանությունը ստանալու:

Սովորական նվերները կարող են սահմանափակվել միայն այն դեպքերով, երբ ուշադրության այդպիսի նշանները չեն կարող ընկալվել որպես ստացողին կաշառելուն նպատակաուղղված: Բացի այդ, դրանք պետք է համապատասխանեն տեղական պրակտիկայով և օրենքներով ու նորմերով թույլատրված կանոնակարգերին և գործարար վարվելակերպի չափանիշներին:

Շահերի բախում

Menarini-ն կատարելապես հակված է բացահայտել ցանկացած իրավիճակ, որը կարող է առաջացնել փաստացի կամ հավանական շահերի բախում, և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու կամ մեղմելու համար:

Menarini-ն շահերի բախում է համարում ցանկացած իրավիճակ, որն առաջանում է, երբ Երրորդ անձի շահերը հակասում են կամ երևութական, թեկուզ հավանական, հակասության ձևով են հանդես գալիս Menarini-ի շահերի հետ:

Եթե երրորդ անձը տեղեկանում է շահերի բախման, նույնիսկ հավանական, կամ որևէ զգայուն իրավիճակի մասին, որը կարող է լուրջ խնդիր ստեղծել Menarini-ի հեղինակության կամ առևտրային հարցերի համար, պետք է ժամանակին իրազեկի վերջինիս:

Մրցակցություն և արդար գործընկերություն

Menarini-ն ողջունում է ազատ և արդար շուկայական մրցակցությունը՝ որպես իր կորպորատիվ արժեքների մաս: Հետևաբար, սոցիալական պատասխանատվության տեսանկյունից, ընկերությունը պարտավորվում է մրցակցել ըստ էության, ինչպես նաև երաշխավորել բարեխիղճ մրցակցություն և արդար ձեռնարկատիրություն:

Menarini-ի կորպորատիվ արժեքներին համապատասխան՝ Երրորդ անձինք, իրենց հերթին, պարտավորվում են իրականացնել արդար մրցակցություն և ձեռնպահ մնալ հակամրցակցային ցանկացած գործելակերպից՝ գործող հակամենաշնորհային և մրցակցային օրենքների համաձայն, անկախ նրանից, գործում են առանձին, թե այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետ համատեղ:

Միջազգային առևտրային գործունեություն

Երրորդ անձինք պետք է պահպանեն միջազգային առևտրի բոլոր օրենքները և կանոնները, այդ թվում՝ ներմուծումը և արտահանումը կանոնակարգող կամ առևտրային պատժամիջոցներին և էմբարգոյին առնչվող օրենքները:

Հաշվապահական գրքեր և գրառումներ

Միջազգային հաշվապահական սկզբունքներին համապատասխան, Երրորդ անձանցից պահանջվում է նաև ճշգրտորեն վարել հաշվապահական գրքերն ու գրառումները, ինչպես նաև ճիշտ կառավարել բոլոր հարկային հարցերն ու հայտարարագրերը:

Menarini-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կլինեն շուկայում հուսալի խաղացողներ և այդ առումով կգործեն ամենայն զգուշավորությամբ:

Գաղտնի տեղեկատվություն

Մենք ակնկալում ենք, որ մեր Երրորդ Անձինք կպահպանեն և միայն պատշաճ կերպով կօգտագործեն ընկերության գաղտնի տեղեկատվությունը՝ գաղտնիության վերաբերյալ պայմանագրերի և բոլոր գործող օրենքների ու նորմերի համաձայն:

Տվյալների պաշտպանություն

Երրորդ անձինք պարտավորվում են պահպանել անձնական տեղեկատվությունը, որը նրանք մշակում են Menarini-ի հետ իրենց գործարքների շրջանակներում և առնչությամբ:

Մասնավորապես, Երրորդ անձինք պետք է մշտապես երաշխավորեն տվյալների մշակման օրինականությունը, ապահովեն տվյալների պահպանության համապատասխան երաշխիքներ և բարձր մակարդակի չափանիշներ, տվյալների մշակման ամբողջ ընթացքում՝ ձեռքբերումից մինչև ոչնչացում, պաշտպանեն անձնական տեղեկատվությունը չարաշահումից և չարտոնված հասանելիությունից, ժամանակին հաղորդեն տվյալների արտահոսքի մասին:

Երրորդ անձինք նաև պետք է թափանցիկ և լոյալ կերպով համագործակցեն Menarini-ի հետ՝ երաշխավորելու համար տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենքների լիարժեք պահպանումը:

Մտավոր սեփականություն

Menarini-ն հարգում է Երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքները: Մենք ակնկալում ենք, որ Երրորդ անձինք կհարգեն Menarini-ի և այլոց մտավոր սեփականության իրավունքները և բոլոր գործող օրենքներն ու նորմերը:

Հակամարտող տարածաշրջանների հանքանյութեր

Ակնկալվում է, որ մեր Երրորդ անձինք համապատասխան միջոցներով և հանգամանորեն կճշգրտեն, որ Menarini-ին մատակարարվող արտադրանքը չի պարունակում հակամարտող տարածաշրջաններից ծագող օգտակար հանածոներից կամ դրանց ածանցյալներից ստացված մետաղներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորում կամ օգուտ են բերում զինված խմբավորումներին:

ԱՇԽԱՏԱՆՔ

Մարդու իրավունքներ

Menarini-ն պարտավորվում է աջակցել և հարգել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով հաստատված սկզբունքները՝ խուսափելով ցանկացած խախտմանը մասնակցությունից:

Մենք պահանջում ենք, որպեսզի մեր Երրորդ անձինք կիսեն մարդու իրավունքների նկատմամբ միևնույն հանձնառությունը:

Աշխատանքային իրավունքներ/ Բացարձակ անհանդուրժողականություն ոտնձգությունների և խտրականության հանդեպ

Մենք ակնկալում ենք, որ մեր Երրորդ անձինք կնպաստեն իրենց աշխատակիցների արժանապատվությանը, առողջությանը, ազատությանը և իրավահավասարությանը՝ ողջ գործող օրենսդրության համաձայն:

Մենք անընդունելի ենք համարում ոտնձգությունները, ահաբեկումները կամ հարկադրանքները կամ նախապաշարումները, որոնք հիմնված են անձնական հատկանիշների վրա, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, կրոնը, ազգային ծագումը, սեռական նախասիրությունները, տարիքը, հաշմանդամությունը, հղիությունը, ամուսնական կամ վետերանի կարգավիճակը կամ որևէ այլ ասպեկտ, որն ընդգրկված է գործող օրենքներում և նորմերում:

Երեխաների աշխատանք, Հարկադիր աշխատանք և Մարդկանց թրաֆիքինգ

Մենք ակնկալում ենք, որ մեր Երրորդ անձինք չեն ներգրավվի կամ չեն աջակցի մարդկանց թրաֆիքինգին կամ ժամանակակից ստրկությանը՝ ներառյալ հարկադիր, ստրկական, ոչ կամավոր աշխատանքը կամ երեխաների աշխատանքը:

Երրորդ անձինք չպետք է օգտագործեն երեխաների աշխատանքը և աշխատանքի ընդունեն անձնակազմ, որը բավարարում է գործող օրենքով նախատեսված աշխատանքային նվազագույն տարիքային պահանջը՝ այն երկրում կամ երկրներում, որտեղ նրանք աշխատում են:

Աշխատաժամեր, աշխատավարձ և հավելումներ

Երրորդ անձինք պետք է աշխատանքային ժամերը, աշխատավարձերը և արտաժամյա աշխատանքի վարձատրությունը սահմանեն այն երկրի կամ երկրների գործող օրենքների ու նորմերի համաձայն, որտեղ աշխատում են:

Հավաքների ազատություն

Մենք ակնկալում ենք, որ Երրորդ անձինք, համաձայն գործող օրենքների ու նորմերի, կհարգեն իրենց աշխատակիցների ազատորեն հավաքվելու, արհմիություններին միանալու, ներկայացուցչություն ունենալու, աշխատանքային խորհուրդներին միանալու և կոլեկտիվների բանակցություններին մասնակցելու իրավունքները:

ՈՐԱԿ

Փոփոխությունների վերահսկողություն

Մենք ակնկալում ենք, որ մեր Երրորդ անձինք առանց նախնական գրավոր հաստատման որևէ փոփոխություն չեն կատարի Menarini-ի կողմից գնվող որևէ ապրանքի առանձնահատկության, մասերի դիզայնի, նյութի, արտադրական գործընթացի, արտադրության վայրի կամ գրանցման կարգավիճակի մեջ:

Որակի / առաքման արդյունավետություն

Երրորդ անձինք պետք է ապահովեն ժամանակին առաքումը՝ մեր պահանջներին համապատասխան:

Մենք ակնկալում ենք, որ մեր Երրորդ անձինք կմշտադիտարկեն արտադրանքի որակի ցուցանիշները և կցուցաբերեն շարունակական բարելավում, որը գնահատվում է ներքին թերությունների, հաճախորդների բողոքների և առաքման թերությունների նվազմամբ:

Երրորդ անձինք պետք է կարողանան ժամանակին արձագանքել Menarini-ի կողմից ներկայացվող բոլոր բողոքներին:

Որակի համակարգ / Որակի պահանջներ

Երրորդ անձինք պետք է ունենան որակի համակարգ և արտադրանքի գրանցում, որոնք համապատասխանում են այն երկրների բոլոր գործող պետական կանոնակարգերին, որտեղ արտադրվում և/կամ առաքվում է նրանց արտադրանքը, և, երբ կիրառելի է, նաև նշանակման վայր հանդիսացող երկրներում գործող նորմերին:

Փաթեթավորում / Պիտակավորում

Արտադրանքը պետք է պատշաճ կերպով նույնականացվի պիտակի վրա համապատասխան տեղեկությունների առկայությամբ՝ բացառելու համար սխալ նույնականացումը և ամբողջական հետագծելիության հնարավորություն ընձեռելով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Աշխատողների պաշտպանություն

Menarini-ն պարտավորվում է ապահովել անվտանգ աշխատավայր՝ ամրապնդելով աշխատողների առողջության և անվտանգության կանխարգելման և պաշտպանության մշակույթը, զարգացնելով վտանգների իրազեկումը և խթանելով պատասխանատու վարքագիծը: Դա ձեռք է բերվում բոլոր աշխատողների մշտական իրազեկման, վերապատրաստման և ուսուցման միջոցով: Մենք ակնկալում ենք, որ Երրորդ անձինք կկիսեն այս պարտավորությունը և կերաշխավորեն անձնական արժանապատվության նկատմամբ լիակատար հարգանք և համապատասխանություն առողջապահական և անվտանգության բոլոր գործող նորմերին:

Մենք ակնկալում ենք, որ Երրորդ անձինք կբացահայտեն, կհաղորդեն և կգնահատեն աշխատավայրում հնարավոր վտանգավոր իրավիճակները՝ դրանց պատճառները վերացնելու և շարունակական բարելավում ապահովելու նպատակով:

Գործընթացների անվտանգություն

Menarini-ն միջոցներ և ընթացակարգեր է տրամադրում արտակարգ իրավիճակների դեմ պայքարելու համար՝ մշտադիտարկելով լիարժեք արդյունավետությունը, ներառյալ պարբերական վթարային վարժանքները:

Մենք ակնկալում ենք, որ Երրորդ անձինք կբացահայտեն, կգնահատեն և կկառավարեն հավանական արտակարգ իրավիճակները՝ իրենց գործունեության հնարավոր ազդեցությունները կանխելու կամ մեղմելու նպատակով:

Շրջակա միջավայրի պահպանություն և թույլտվություններ

Menarini-ն անկեղծորեն գիտակցում է բնական միջավայրի պահպանության և բիզնեսի կայուն վարման կարևորությունը՝ միջազգային և տեղական բոլոր գործող օրենքների և նորմերի համապատասխան:

Երրորդ անձանցից պահանջվում է վարվել նույն կերպ՝ պահպանելով բնական ռեսուրսները և հետևելով բնապահպանական բոլոր գործող օրենքներին ու նորմերին: Համապատասխան կերպով պետք է ձեռք բերվեն ձեռնարկատիրության համար անհրաժեշտ բոլոր բնապահպանական լիազորությունները, թույլտվությունները և լիցենզիաները:

Քիմիական նյութեր, թափոններ և արտանետումներ

Menarini-ն կառավարում է իր ձեռնարկատիրության բոլոր բնապահպանական ասպեկտները՝ դրանց ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Երրորդ անձինք պետք է նվազագույնի հասցնեն արտադրական թափոնների առաջացումը, խրախուսեն դրանց վերօգտագործումը, համապատասխան կերպով կառավարեն ջրի արտահոսքը, մթնոլորտային արտանետումները կամ ցանկացած այլ ասպեկտ, որը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա:

Երրորդ անձինք նաև պետք է իրենց գործունեության մեջ հնարավորինս նվազեցնեն վտանգավոր նյութերի օգտագործումը:

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԻՐԱԶԵԿՈՒՄ)

Հաղորդում

Menarini-ն Երրորդ անձանց կոչ է անում հայտնել սույն կանոնագրքում պարունակվող օրենքների, նորմերի և սկզբունքների ցանկացած խախտման մասին, նույնիսկ անանուն կերպով և առանց վախենալու որևէ հաշվեհարդարից, թեկուզ հավանական:

Արդյունավետ հաղորդումը խրախուսելու համար գործում են իրազեկման հատուկ ալիքներ.
Կայք՝ https://menarinigroup.ethicspoint.com
Global Compliance փոստ.
globalcompliance@menarini.com
Տվյալների արտահոսք և անձնական տվյալներին առնչվող այլ խնդիրներ. dpo@menarini.com

Բոլոր հաղորդված մտահոգություններին կցուցաբերվի արդարացի մոտեցում, դրանք պատշաճ կերպով կդիտարկվեն և կուսումնասիրվեն խիստ գաղտնիության պայմաններում: Անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն կարգապահական և ուղղիչ միջոցներ՝ քաղաքականության հնարավոր բացերը վերացնելու և հետագա խախտումները կանխելու նպատակով:
Սույն կանոնագրքի որոշ խախտումներ կարող են պահանջել, որպեսզի Ընկերությունը հարցը փոխանցի համապատասխան պետական կամ կարգավորող մարմիններին՝ հետագա հետաքննության կամ դատաքննության համար:

Մենք ակնկալում ենք, որ Երրորդ անձինք կտեղեկացնեն իրենց անձնակազմին, որ նրանք չեն հետապնդվի՝ որևէ խնդրի մասին բարեխղճորեն մտահոգություն հայտնելու դեպքում:

Կարգապահական պատժամիջոցներ

Menarini-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կվարվեն էթիկայի նորմերի համապատասխան, հետևաբար, նրանցից պահանջվում է պահպանել սույն կանոնագիրքը: Գործող օրենքների և նորմերի, ինչպես նաև սույն կանոնագրքի ցանկացած խախտում կհանգեցնի համապատասխան պայմանագրային պատժամիջոցների՝ խախտման լրջության և այլ հատուկ դրույթների համաձայն:

Ethical vision,
Integrity in action

MENARINI
group